

Մուսաննա Գ. Հովհաննիսյան  
բանաս. գիտ. թեկնածու

## ՄԵԾԵՐԻ ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐԸ

### Հովհ. Թումանյան և Կոմիտաս\*

Նոր ժամանակների հայ մշակույթի երկու խորհրդանիշերը դարձած մեծագույն արվեստագետների՝ Հովհաննես Թումանյանի ու Կոմիտասի տարեկից և բախտակից ընկերներ դառնալու փաստը արտացոլում էր 20-րդ դարում հայությանը բաժին ընկած ցավի ու տառապանքների մեծ խորհուրդը, որը նրանք խորապես ընկալեցին իրենց ողջ գիտակցական կյանքում և հանճարեղորեն արտացոլեցին սեփական ստեղծագործություններում:

Կարծես ի վերուստ էր կանխորոշված, որ հարազատ ժողովրդին ծառայելու փշոտ ուղիներում վաղ թե ուշ Հովհ.Թումանյանն ու Կոմիտասը հանդիպելու էին մեկմեկու: Կոմիտասը Թումանյան արվեստագետին ճանաչել ու համակրել է, երբ ընթերցել է նրա առաջին՝ 1890 թ. լույս տեսած «Բանաստեղծություններ» ժողովածուն, Գևորգյան ճեմարանում ուսանելու տարիներին: Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի հափշտակությամբ է ազգային երաժշտության զարգացման նոր դարագլուխը բացած երգահանը ընթերցել ազգային գրականության պատմության մեջ նույն դերն իրականացնող բանաստեղծի երկերը: Այդ մասին վկայում է Գևորգյան ճեմարանում քսանմեկամյա ուսանող Մողղմոն Մողղմոնյանի (Կոմիտասի) դասախոսը՝ Ստեփան Լիսիցյանը, որին բոլոր ուսանողները առանձնակի ջերմությամբ ու վստահությամբ էին վերաբերվում: Թումանյանի ստեղծագործություններով հիացած ճեմարանի աշակերտները որոշում են «ստուգել իրենց տպավորությունը»<sup>1</sup> և հատորը դնում են ամբիոնի վրա: Լիսիցյանը վերցնում է Հ. Թումանյանի գիրքը և մեկ շաբաթ անց, մտնելով լսարան, նորից նկատում է ուսանողների մեծ ոգևորությունը: Կոմիտասը, որն առաջին կուրսի ուսանող էր, մյուս-

\* Նույն 1869 թվականին ծնված նոր ժամանակների հայ մշակույթի երկու ամրակուռ վեճերի՝ Հովհաննես Թումանյանի և Կոմիտաս վարդապետի կյանքը անսովոր ու հետաքրքրական է անձնական ու ստեղծագործական բազմաշերտ ու բազմազան կապերի առումով: Երկուսն էլ ինչ-որ բան են փոխանցել մեկը մյուսին իրենց մարդկային վեճ նկարագրից, տաղանդից ու անձնական հմայքից, նրանց մտերմությունը եղել է անմնացորդ և անկեղծ՝ ազգին ու հայրենիքին ծառայելու դժվարին ու խորդուբորդ ճանապարհին: Հայոց երկու մեծերի ծննդյան 140-ամյակի առիթով վերհիշենք այս ամենը՝ առանց ավելորդ վերլուծությունների, միայն փաստերով, որոնք ներկա սերնդի համար հզոր լիցք են պարունակում՝ որպես անկեղծ նվիրումի և գաղափարակցության անկրկնելի օրինակներ: *Խմբ.*

<sup>1</sup> Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Եր.,- 1969, էջ 347 (այսուհետև՝ ԹԺԳ):

ների հետ զբաղված էր Թումանյանի երկերի «կրկին ու կրկին ընթերցանությամբ», քանզի «Դա մի ռուբ էր, որ պայթել էր բանաստեղծությանը ոգևորվող մեր շրջանի մեջ: Հրաբխային մի ժայթքում էր գրքույկի ամեն մի էջը, ամեն տողը... Անհայտությունից լույս աշխարհ էր հայտնվել մի իսկական բանաստեղծ և մեկ անգամից կանգնել էր մեր աչքերի առջև իր ամբողջ հասակով, և հիացած նայում էինք նրա տաղանդի մեծությանը»<sup>2</sup>:

Հովհ. Թումանյանի հատորը անցնում էր լսարանից լսարան, ձեռքից ձեռք, և ուսանողներն անգիր էին սովորում նրա բանաստեղծությունները, իսկ որոշ տողեր՝ երգի վերածում: «Եվ քանի անգամ,- վկայում է Ստ. Լիսիցյանը, - դասամիջոցին առաջին լսարանի ուսանող Սողոմոն սարկավազը (Կոմիտասը) ականջիս տակ շշնջաց. - Լավ է, չէ՞, լավ է, չէ՞...»<sup>3</sup> :

Հանձին Թումանյանի՝ Կոմիտասը տեսնում էր այն տաղանդավոր անհատին, որի շնորհիվ ազգը պիտի ճանաչելի դառնա: Արմենակ Շահմուրադյանի հետ զրուցելիս Կոմիտասը ասել է. «Իմացած եղիր, որ հատկապես փոքր ազգերը անհատներով են ճանաչելի դառնում, թե՛ վատ և թե՛ լավ կողմերով»<sup>4</sup>:

Հայ մշակույթի երկու մեծերի հեռակա ծանոթության համար առիթ է ծառայել 1903 թ. Հովհ. Թումանյանի Թիֆլիսի ժողովածուի հրատարակությունից հետո իշխանուհի Մարիամ Թումանյանի դիմումը Կոմիտաս վարդապետին: Իշխանուհին նրան պատմում է հայկական օպերա տեսնելու իր երազանքի մասին և առաջարկում է Թումանյանի «Անուշ» պոեմը վերածել օպերայի: «Հավատացած եմ,- գրում էր իշխանուհին,- որ Կոմիտասի գրչի տակից դուրս կգար մի հրաշալի բան, և իմ մեջ միտք հղացավ առաջարկել նրան Թումանյանի «Անուշը» օպերա դարձնելու»<sup>5</sup>: Այդ նպատակով նա էջմիածին՝ Կոմիտասին է ուղարկում բանաստեղծի 1903 թ. ժողովածուն, իսկ վերջինս 1904 թ. հունվարի 22-ին իշխանուհուն պատասխանում է գրեթե քեզով խոսք դարձած մի արտահայտությամբ. «Շնորհափա՛յլ իշխանուհի, ուրախութեամբ կարդացի պ. Հ. Թումանյանի «Անուշը» ու շա՛տ անուշ գտայ. պատրաստ եմ Ձեր փափագն իրագործելու»<sup>6</sup>:

Կոմիտասը, ընդառաջ գնալով իշխանուհու գաղափարին, անմիջապես համաձայնում է: Այդ նպատակով 1904 թ. հունվարի 22-ին նա խնդրում էր Մարիամ Թումանյանին իր կողմից բանաստեղծին առաջարկել որոշ փոփոխություններ կատարել և «Լրացնելուց յետոյ արտագրե՛ ինքը և ինձ ուղարկե՛, եթե՛ երաժշտութեան բարենձայնութեան համար փոխելու բաներ լինե՛ր՝ նշանակե՛մ: Իւրաքանչիւր դերակատարի անունը նշանակե՛ իր երգելիքից առաջ՝ տողասկզբին: Որքան կարելի է՝ խույս տայ թուրքերէն բառերից, երգի ոգին պահելու համար: Ամբողջութեան կապն իբրև երաժշտական երկ թերի է, կխնդրեմ՝ լրացնե՛. օրինակ. մայրը ձորն ի վայր ձայն է տալի (100), իսկ աղջիկն ու հովիւր խօսակցում են, ուրեմն բեմի վերայ չեն երևայ. որ անյարմար է»<sup>7</sup>:

<sup>2</sup> ԹԺՅ, 348:

<sup>3</sup> ԹԺՅ, 348:

<sup>4</sup> Խ.Գ. Բաղիկյան, Կոմիտասը ինչպիսին եղել է, Ե., 2002, էջ 215:

<sup>5</sup> Մարիամ Թումանյան, Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները, Եր., 2003, էջ 137:

<sup>6</sup> Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 48:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 49:

Կոմիտասը շտապեցնում էր, որպեսզի կարողանա պոեմի համար երաժշտության «ծրագիրը մշակել», սակայն իշխանուհուն արագ աշխատելու խոստում չէր տալիս, քանի որ ծանրաբեռնված էր ճեմարանի դասերով, դեկավարում էր Մայր Աթոռի երգչախումբը, ուսումնասիրություն էր պատրաստում Միջազգային երաժշտական ընկերության գիտական ժողովածուի համար, Տիգրան Նազարյանի խնդրանքով «Տարագի» համար պատրաստում էր «Վազներ Ռիխարդ», «Ֆրանց Լիստ» և «Հովսեփ Վերդի» հողվածները<sup>8</sup>:

Թումանյանը և Կոմիտասը այդ պահին դեռևս անձնապես ծանոթ չէին մեկմեկու, թեև արդեն լավ ճանաչում ու գնահատում էին միմյանց՝ որպես արվեստագետներ: Նրանց առաջին հանդիպումը կարող էր տեղի է ունենալ 1904 թ. մայիսի 3-ին, բանաստեղծի՝ Էջմիածին կատարած ուղևորության ընթացքում: Նախօրեին՝ մայիսի 2-ի երեկոյան, Թումանյանը Երևանից հասել էր Էջմիածին: Սակայն այդ օրը Թումանյանի և Կոմիտասի ծանոթությունը, հավանաբար, չէր կայացել, գուցե՝ Կոմիտասի Էջմիածնից բացակայելու և շրջակա գյուղերում լինելու պատճառով: Հայտնի է, որ Կոմիտասը մեկնել էր Ալազյազ(Արագած) ու Ապարան՝ երգեր հավաքելու: Հակառակ դեպքում Թումանյանը իր տպավորությունները անպայման կշարադրեր այդ օրերին Էջմիածնից գրած նամակներում, որոնցում հանգամանորեն անդրադարձել է մայիսի 4-ին Խրիմյան Հայրիկի հետ ունեցած հանդիպմանը, սակայն ոչ մի խոսք՝ Կոմիտաս վարդապետի մասին: Իսկ 1904թ. մայիսի 5-ին Թումանյանը «խմբով», որի կազմը չհաջողվեց պարզել, գնում է Արաքսը տեսնելու: Արարատյան դաշտում շրջելուց հետո բանաստեղծը վերադառնում է Թիֆլիս և մայիսի 9-ին արդեն տանն էր:

Ուրեմն՝ ավելի հավանական է, որ Թումանյանը և Կոմիտասը ծանոթացել են 1904 թ. հունիսի 16-ից 18-ն ընկած ժամանակամիջոցում, երբ Թումանյանը Էջմիածին էր եկել Օշականից, որտեղ նա գտնվում էր «Թարգմանչաց տոնին» մասնակցելու նպատակով: «1904 թ. ամռանը... Շուկավերից Մայր Տաճար է այցելում ամենայն հայոց բանաստեղծը: Կոմիտասի համար, ու երկուստեք, դա մեծ երջանկություն էր՝ երաժշտական մարմնավորում տալ ժողովրդական ավանդույթներով ու սովորույթներով հարուստ «Անուշ» պոեմին: Թումանյանը հյուրընկալվեց Կոմիտասի բնակարանում և այդ «գողտրիկ» բնակարանը վերածվեց Վերնատան»<sup>9</sup>, - գրում է Խ. Բաղիկյանը: Կոմիտասի տունը բանաստեղծի գալով դարձավ հավաքատեղի՝ Էջմիածնի մտավորականության համար. ամենքը ցանկանում էին Թումանյանի և Կոմիտասի ներկայությունն ըմբռնել՝ գրական-երաժշտական հավաքներում, որոնք տևում էին ողջ գիշերը՝ «մինչև առավոտյան ժամերգության քաղցրահնչյուն զանգերի դողանջները»<sup>10</sup>:

Կոմիտասի տանը չէին դադարում նաև գրական ասուլիսները: Այդ հավաքներում իշխում էր ուրախությունն ու ընդհանուր ոգևորությունը: Կոմիտասն իր առինքնող ձայնով երգում էր «Մեր դռանը խնկի ծառ», «Հոյ նազան իմ», Ջիվանիին՝ «Ես մի ծառ եմ ծիրանի», «Մասունա սար»... Կոմիտասի թախանձանքով Ջիվանին երգում է նաև Շիրիհի «Այգեպանը», որը երգահանը ուզում էր ձայնա-

<sup>8</sup> Տես «Տարագ», Թիֆլիս, 1904, թիվ 8, 19, 23:

<sup>9</sup> Խ.Գ. Բաղիկյան, Կոմիտասը ինչպիսին եղել է, Ե., 2002, էջ 123:

<sup>10</sup> Նույն տեղում:

գրել: Այդ պահին, երբ «նոր էր Կոմիտասն ավարտել իր ճայնագրությունն ու ֆիզ-  
հարմոնի վրա փորձարկելը, երբ Հովհաննես Թումանյանը - սուսիկ-փուսիկ մոտե-  
ցավ լուսամուտին, հայացքն ուղղեց վեհափառ Մասիսներին ու սկսեց. Ա՛խ, ինչ  
լավ էր սարի վրա...: Նման քնքուշ ու նուրբ երգը չէր կարող ներկաների հիացմուն-  
քը չշարժել»<sup>11</sup>:

Բոլորը, սակայն, զարմանքից կարկամում են, երբ Մանուկ Աբեղյանի այն  
հարցին, թե ով է տեքստի հեղինակը, Թումանյանը ժպտալով պատասխանում է,  
որ ինքն է: Կոմիտասը հիացած բացականչում է. «Դա հրա՛շք է»<sup>12</sup>: Կոմիտասը  
առաջարկում է պարզևատրել ոչ միայն բառերի հեղինակին՝ Հովհ. Թումանյա-  
նին, այլ նաև «այդ նուրբ մեղեդու հեղինակին»: Բանաստեղծը, որ մի փոքր առաջ  
խնդրել էր կռահել, թե ով է մեղեդու հեղինակը, ասում է. «Տղամարդ եք, դե գտեք,  
ուրիշ ժամանակ գլուխ եք գոլում»: Մ. Աբեղյանը միանգամայն համոզված էր, որ  
երաժշտությունը ժողովրդական է: Նույն կարծիքն են հայտնում նաև մյուսները:  
Այնժամ Թումանյանը խոստովանում է, որ երգի մեղեդու հեղինակը նույնպես  
ինքն է, և ավելացնում է. «Դե ինչ, կրկնակի պարզևատրեք, որովհետև թե՛ բառե-  
րի և թե՛ երաժշտության հեղինակը ես եմ»<sup>13</sup>:

Վրթանես Փափագյանն էլ իր կողմից առաջարկում է երրորդ պարզևա՛ երգի  
կատարման համար: Այնուհետև Եղիշե Թաղևոսյանը «Ա՛խ, ինչ լավ էր սարի  
վրա» երգին տալիս է հետևյալ գնահատականը. «Քիչ առաջ նրա երգած սերը,  
աղջիկն ու հովիվը հենց Լոռվա ժողովուրդն ու բնությունն են միահյուսված»:  
Դրան հաջորդում է Կոմիտասի խոսքը՝ Լոռին տեսնելու իր նվիրական երազանքի  
մասին: Նա ավստասնք է հայտնում, որ չի տեսել այդ «սքանչելի բնությունը», չի  
շնչել նրա լեռնային մաքուր օդը, չի լսել Դեբեդի քջքոցը, չի բարձրացել Չափն-  
դաղը: Թումանյանը անմիջապես հրավիրում է Կոմիտասին՝ հաջորդ օրն իսկ  
գնալ Դսեղ: Կոմիտասը ավստասնքով մերժում է բանաստեղծին՝ բազմազբաղ ու  
չափազանց հագեցած աշխատանքային առօրյայի պատճառաբանությամբ, սա-  
կայն խոստանում է «Լարային կվարտետ» գրել<sup>14</sup>: Ցավոք, Կոմիտասին այդպես էլ  
չի հաջողվում Թումանյանի հետ այցելել Լոռի և ուսումնասիրել նրա բնաշխարհն  
ու մարդկանց:

Երկու մեծերի գրույցը շարունակվում է Էջմիածնում, Կոմիտասի սիրած վայ-  
րում՝ Ներսիսյան լճի ափին, «Այն հրաշալի ծառուղիներում, որտեղ Սեծ Մասիսը  
ասես ափիդ մեջ լինի, և որտեղ այնքան լայնարձակ է երևում Արարատյան դաշ-  
տը»<sup>15</sup>: Դասերից հետո այդ գեղատեսիլ պուրակում Կոմիտասի քառածայն երգ-  
չախումբը համերգ է տալիս, որտեղ հնչում են ինչպես Կոմիտասի երգերը, այն-  
պես էլ համաշխարհային օպերային արվեստի գործեր և դասական երաժշտու-  
թյուն: «Կոմիտասը դրանով Թումանյանին ցույց տվեց, որ իր երգչախումբը լրիվ  
պատրաստ է Թիֆլիսյան համերգներին»<sup>16</sup>: Որպես հրաժեշտի խոսք՝ հնչում է Ջի-  
վանու «Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդու» երգը, որից հետո Կոմիտասը

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 125:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> Տես նույն տեղում, էջ 127:

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 128:

կառքով ուղեկցում է Թումանյանին և Ջիվանուն մինչև կայարան, ուր նրանք պիտի նստեին Երևանից ժամանած գնացքը:

Կոմիտասի ու Թումանյանի միջև Էջմիածնում ստեղծված մտերմությունը շարունակվեց Թիֆլիսում, ուր 1905 թ. գարնանը «Հայ տիկնանց միությունը», որի ատենապետուհին տիկին Ն. Ղամբարյանն էր, Կոմիտասին հրավիրում է համերգներ տալու: Հյուրախաղերի նախաձեռնողների թվում էր նաև իշխանուհի Մարիամ Թումանյանը: Իսկ կազմակերպչական հարցերով հիմնականում զբաղվում էր ատենապետուհին՝ տիկին Ն. Ղամբարյանը: Այդ է վկայում Կոմիտասի՝ նրան ուղղված 1905 թ. փետրվարի 28-ի նամակը, որտեղ երաժիշտը հարցնում էր, թե գրաքննիչին արդյոք պե՞տք է ներկայացնել համերգների ծրագրերը և երգերի տեքստերը<sup>17</sup>:

1905 թվականի մարտի 28-ին 60 հոգուց բաղկացած քառաձայն երգչախմբով Կոմիտասը Էջմիածնի կայարանից ուղևորվում է Թիֆլիս: Ժամանակակիցները վկայում են, որ լուսաբացին, երբ զնացքն անցնում էր «գեղատեսիլ Լոռվա սարերով՝ քչքչան Դեբեդին զուգահեռ, Կոմիտասն արթնացնում է ավելի հասուն տղաներին, որ վայելեն այդ չքնաղ բնությունը, և ո՞վ գիտե, գուցե և ծեր Դեբեդի ավերին, կամ ինչ-որ լեռների այրերում, կամ Չաթինդաղի լանջերին տնից ու գյուղերից փախած Անուշին ու Սարոյին տեսնեն»<sup>18</sup>:

1905 թ. գարնանը Թումանյանը Կոմիտասի համար այն միակ ու թերևս ամենամտերիմ անձնավորությունն էր, որին երաժիշտը, Թիֆլիս գալով, այցելության զնաց իր համերգներից առաջ: Կոմիտասը բանաստեղծի տուն է տանում նաև իր սիրելի աշակերտին՝ երգիչ, հետագայում «Աննա Կարենինայի», «Քաջ զինվոր Շվեյկի արկածները» և այլ երկերի թարգմանիչ Վահան Տեր-Առաքելյանին: Կոմիտասը Վահան-Տեր-Առաքելյանին Թումանյանի հետ ծանոթացնելիս իր աշակերտի ձայնը համեմատում է անապատում առյուծի գիշերային մռնչյունի հետ: Բանաստեղծը այդ համեմատությանը արձագանքում է այսպես. «Թող արծիվ ու առյուծները շատ լինեն մեր մեջ, թե չէ աղվես ու նապաստակ ծնող ազգը ապագա չունի էս դաժան դարում»<sup>19</sup>: Առաջին իսկ հայացքից Թումանյանը իր «հոգու աչքերով» կռահել էր 17-ամյա երգչի ապագան՝ նրա մեջ տեսնելով ռազմական գործչին, գրողին ու թարգմանչին: Իսկ Վահան Տեր-Առաքելյանը մեկ առ մեկ գրի է առնում Թումանյանի տանն անցկացրած ժամերի բոլոր մանրամասները, երկու մեծերի արտաբերած յուրաքանչյուր բառը: Նախ՝ նա արձանագրում է, որ այդ պահին Կոմիտասի համար Թիֆլիսում ամենամտերիմ ու հարազատ անձն ու մշակույթի գործիչը Թումանյանն էր. «Կոմիտասը Թիֆլիսում ուներ բազմաթիվ ծանոթներ, անձնական բարեկամներ, բայց համերգներից առաջ ոչ ոքի այցելության չզնաց, բացի Հովհաննես Թումանյանից»<sup>20</sup>:

Կոմիտասի և Հովհ. Թումանյանի՝ 1905 թ. գարնանային այդ օրվա գրույցի թեման օտարամոլության դեմ ազգային գրականության ու երաժշտության միջոցով պայքարի խնդիրն էր: Բերելով մեծահարուստների քամահրակական կարծիքը ժո-

<sup>17</sup> Տե՛ս Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 50:

<sup>18</sup> Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 48:

<sup>19</sup> ԹԺ, 570:

<sup>20</sup> ԹԺ, 569:

ղովրդական երգի նկատմամբ՝ Կոմիտասը կրքոտ կերպով պաշտպանում էր ազգային երգը՝ իր կյանքի իմաստն ու խորհուրդը, և ասում. «Ժողովրդական երգի բնորոշ հոտը հայոց լեռնաշխարհի գունագեղ ծաղիկների անուշ բույրն է, նրանից ուրիշ հոտ առնողն ինքն է հոտած՝ նման հոպոպի, որը շուտ-շուտ փոխում է իր բույնը, կարծելով, թե բույնը հոտած է, բայց փաստորեն հոտածն ինքն է»<sup>21</sup>:

Օտարամոլության և ստրկամտության վտանգը գնահատելու առումով Թումանյանը շատ ավելի լավատեսորեն էր տրամադրված: Կոմիտասը նկատում էր. «Հայերս զարմանալի օտարամոլ ժողովուրդ ենք: Մենք քաշվում ենք, մենք ամաչում ենք բացեիքաց գնահատել, մանավանդ սիրել մեր արժանիքները, լինի դա կուլտուրական նվաճում, թե կուլտուրական դեմք, անձնավորություն...: Ստրկամիտ մարդուն հատուկ մոլությամբ՝ նվաստացնելով մերը, մենք սիրում ենք փքել, ուռցնել օտարինը, երբեմն նաև մերը, բայց այն, ինչ իրականում ոչ մի արժեք չունի»<sup>22</sup>:

Հովհ. Թումանյանը չէր կարող չհամաձայնել Կոմիտասի հետ, քանի որ ինքն էլ բազմիցս հրապարակավ պայքարել էր այդ երևույթի դեմ: Սակայն նա համաձայն չէր Կոմիտասի հետ ստրկամտությունը՝ իբրև ցեղային հատկանիշ բնորոշելուն: Իսկ գոյություն ունեցող տխուր իրողությունն էլ բացատրում էր հայ ժողովրդի պատմական ճակատագրով, ֆիզիկական գոյության՝ «գլխապահության» նպատակով զանազան բռնակալություններին հարմարվելու, համակերպվելու պարտադրանքով, ինչը չէր կարող իր «անպիտան կնիքը» չթողնել նրա նկարագրի վրա: Կոմիտասին թվում էր, թե Թումանյանը իր «պատմական տեսությամբ» փորձում էր մեղմել իրականության ծանր տպավորությունը և անմխիթար վիճակը: Նա անվերջ կրկնում էր. «Մենք կանգնած ենք այլասերման ճանապարհի վրա, եթե շարունակվի այն, ինչ գոյություն ունի»<sup>24</sup>:

Թումանյանը իրեն այնքան բնորոշ լավատեսությամբ փորձում էր մեղմել Կոմիտասի տխուր, հուսահատական տրամադրությունը՝ կապված հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ապագայի հետ: Նա ասում էր. «- Ո՛հ, Կոմիտաս, հայ մարդը հեշտությամբ կուլ գնացող պատառ չէ... Ո՞վ գիտե, թե ինչ հաճելի անակնկալներ է պատրաստում մեզ համար գալիք օրը»: Եվ անշուշտ, երկու ամենաազգային արվեստագետները չէին կարող չխոսել ազգային գրականության և ազգային երաժշտության մասին: Ուստի, երբ Թումանյանը հարցնում է «հայրենական երգերի» մասին Կոմիտասի «հեղինակավոր կարծիքը», վերջինս պատասխանի փոխարեն արտասանում է.

Ես մի չոր ծառ էի,  
Դուն՝ զարնան արև,  
Քո սիրով ծաղկեցավ  
Իմ ճյուղն ու տերև...

Երկուսն էլ համակարծիք էին, որ «գոհարների անապառ աղբյուր է հայ ժողովուրդը»<sup>25</sup>: Ուստի, ամեն անգամ, երբ Կոմիտասը Թումանյանից լսում էր հիաց-

<sup>21</sup> ԹԺՅ, 571:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> ԹԺՅ, 572:

<sup>24</sup> Նույն տեղում, 573:

<sup>25</sup> Նույն տեղում, 574:

մունքի խոսքեր իր հասցեին, համեստորեն պատասխանում էր, որ «հրաշալիքը», «գարմանահրաշքը» ոչ թե ինքն է, այլ գեղջուկը, նրա երգը, քանի որ «վատ բանը չի կարող լավ դառնալ»<sup>26</sup>:

Կոմիտասի այս հիշարժան հանդիպումը Թումանյանի հետ հավանաբար, տեղի է ունեցել 1905թ. մարտի վերջին օրերին՝ 30-ին կամ 31-ին, քանի որ նրա համերգները կայացել են ասպրիլի 1-ին և 3-ին Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում՝ «Հոգևոր և ժողովրդական համերգ» խորագրով: Նվարդ Թումանյանը վկայում է, որ Թումանյանը մասնակցել է այդ համերգներին.«Հայրիկը ներկա է եղել Կոմիտասի երգչախմբի համերգներին»<sup>27</sup>:

1905թ. ասպրիլի 1-ին, չնայած Արտիստական ընկերության դահլիճում «լրացուցիչ աթոռներ» էին դրված, շատերը ոտքի վրա էին: Կոմիտասի կենսագիրը գրում է. «Մեղմաքայլ բեմ է մտնում սևագգեստ խմբավարը, խոնարհ գլուխ է տալիս և անմիջապես նկատում մոտիկ նստած Հովհաննես Թումանյանին, Ղազարոս Աղայանին, Վրթանես Փափագյանին, Ալեքսանդր Ծատուրյանին և Էջմիածնից հատուկ իր համերգը լսելու եկած Թորոս Թորամանյանին և Եղիշե Թադևոսյանին: Կոմիտասը նրանց աննկատելի աչքով է անում ու շրջվում դեպի խումբը: Համերգից հետո դահլիճի օթյակներից, յարուսներից, ամֆիթատրոնից ու պարտերից բեմահարթակ են նետվում անհամար թերթիկներ, այցետոմսեր, գրություններ՝ համերգից ստացած հիացական խոսքերով: Բեմ են բարձրանում Հովհաննես Թումանյանը, Վրթանես Փափագյանը, Ղազարոս Աղայանը, Ազատ Մանուկյանը, Ղամբարյան ամուսինները, նույնիսկ կինտոներ՝ իրենց «գեմացվալեններով»»<sup>28</sup>:

Հովհաննես Թումանյանը հատկապես հիացել էր Վահան Տեր-Առաքելյանի՝ «Անտունիի» կատարմամբ: «Մեծ լռեցիմ, որ հիացած էր Վահանի զուլալ ձայնով ու հստակ կատարումով, ձեռքը դնում է նրա ուսին ու ասում. «Հրաշալի է քո ձայնը, տղա՛ս, հրաշալի: Կոմիտասյան երգը արժանի կատարող ունի այս դարում»»<sup>29</sup>:

Կոմիտասի կենսագիրը վստահեցնում է, որ Վահանն էր երգչախմբի զարդն ու ծաղիկը, «Կոմիտասի սիրելի սոխակը, որը ճեմարան էր բերել իր հայրենի Դարալազյազի, Գողթնի հրաշալի երգերը, և այնքան սքանչելի էր դրանք կատարում, որ երբ հետագայում Չարենցը ճանաչեց նրան ու լսեց, հրաշք անվանեց»<sup>30</sup>:

«Անտունին»՝ տնանկի այդ ողբը, Վահան Տեր-Առաքելյանը այնպիսի սրտառուչ ու խոր զգացմունքով էր կատարել, որ, ականատեսների վկայությամբ, սարսուռն անցել էր ամբողջ դահլիճով մեկ, և չոր աչք չէր մնացել<sup>31</sup>:

Համերգից հետո Թումանյանի բազմանդամ ընտանիքը հյուրընկալում է Կոմիտասին և նրան ընկերակցող հայ, ռուս, վրացի արվեստագետների՝ նկարիչներին, գրողներին, երաժիշտներին: Թումանյանն արդեն իր տանն է մեծարանքի խոսքեր

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> Նվարդ Թումանյան, Գուշեր և գրույցներ, Ե., 1987, էջ 56:

<sup>28</sup> Խ.Գ. Բաղիկյան, Կոմիտասը ինչպիսին եղել է, Ե., 2002, էջ 148:

<sup>29</sup> Նույն տեղում:

<sup>30</sup> Նույն տեղում:

<sup>31</sup> Նույն տեղում, 398: Վահան Տեր-Առաքելյանը նույնպես 1936 թ. արժանանում է Թումանյանի որդիների և բազում արդար մտավորականների դաժան ճակատագրին: Նա ծերբակալվում և խորհրդային համակենտրոնացման ճամբար է ուղարկվում, որի պատճառով չի կարողանում մասնակցել Երևանում Կոմիտասի աճյունը հողին հանձնելու արարողությանը:

ուղղում «մեծ հայ ու մեծ հայրենասեր, ամենայն հայոց երաժիշտ, երգահավաք ու երգամշակ» վարդապետին, որին համարում է ոչ թե իր տան հյուրը, այլ «մեր աչքի լույսը»: Թումանյանի խոսքերով՝ Կոմիտասը Թիֆլիսի հանրությանը ապացուցեց նաև, թե ինչ է նշանակում ժողովրդական երգ, և ինչպես պետք է կատարել հոգևոր երգերը: Այս խոսքերից հետո Կոմիտասը բարձրաձայն ընթերցում է բեմահարթակ «վայրէջք կատարած» թերթիկներից մեկը, որի վրա գրված էր. «Եթե եկեղեցում այսպես երգեին, ներս մտնելու համար պետք կլիներ ժամերով հերթ կանգնել»<sup>32</sup>:

Կոմիտասը իր երգչախմբով տասը օր նախատեսածից ավելի մնում է Թիֆլիսում՝ երկաթուղայինների գործադուլի պատճառով: 1905թ. ապրիլի 6-ին և 7-ին Հովնանյան օրիորդաց դպրոցում և երաժշտական ուսումնարանում նա կարդում է «Հայ ժողովրդական և եկեղեցական երգերը» խորագրով դասախոսություն, որին Թումանյանի ներկայությունը նույնպես հավանական է:

Կոմիտասը Թիֆլիս գալիս պարտադիր այցելում էր Թումանյանին և ամեն անգամ՝ գուցե թաքուն մի բավականությամբ, լսում նրա անկեղծ հիացմունքի և բարձր գնահատանքի խոսքերը: Մինչդեռ Թումանյանը հայտնի էր ինչպես իր բոլոր գրչակից ընկերների, այնպես էլ իր իսկ ստեղծագործությունների նկատմամբ քննադատական մոտեցումներով, դժվարահաճ բնավորությամբ: Մշտապես արվեստի կատարելության ձգտող Թումանյանի բծախնդրությունը երբեք չի տարածվել Կոմիտասի արվեստի նկատմամբ: Կոմիտասի կենսագիրը գրում է. «Թիֆլիս ժամանած Կոմիտասը հաճախակի էր այցելում իր ընկերներին ու բարեկամներին: Նա Հ. Թումանյանի գերդաստանի ամենահարգված հյուրն էր: Երկու մեծ մտավորականները հաճախ գիշերներ են լուսացրել՝ խոսելով ու խորհելով բազմաթիվ ու բազմապիսի հարցերի շուրջ: Երբ վարդապետը խոսակցությունը թեքում էր ազգային հարցի ու քաղաքական խառն ու իր համար չափազանց անհուսալի հարցերի շուրջ, ավելի լավատես Հ. Թումանյանը նրան շեղում էր նման մռայլ մտքերից և հուսադրում. «Օրեր են, կմթնեն, անց կկենան»<sup>33</sup>:

Կոմիտասը 1908 թ. սկզբներին, իբրև Կուտինայի և Բրուսայի հոգևոր թեմերի պատգամավորության ներկայացուցիչ՝ մեկ ձայնի իրավունքով, Էջմիածնում պետք է մասնակցեր կաթողիկոսական ընտրություններին: Ընտրությունից հետո արևմտահայ պատգամավորների հետ միասին, նա գալիս է Թիֆլիս՝ համերգներ տալու նպատակով: Այդ օրերին նկարիչ Գ. Բաշինջաղյանի արվեստանոցում հանդիպում է Հովհ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին, Ղ.Աղայանին, Ա. Չոպյանյանին և Վրթ.Փափագյանին:

Չնայած իր ծանրաբեռնվածությանը՝ Կոմիտասը սկսում է «Անուշ» պոեմը օպերայի վերածելու աշխատանքները: Երաժշտի այս որոշմանը գումարվում են «Մասնա ծեփ», «Քաղաքավարության վնասները» և «Վարդան» օպերաները գրելու նրա մտահղացումները<sup>34</sup>: Սակայն «Անուշը» միանգամից դառնում է

<sup>32</sup> Նույն տեղում, 150:

<sup>33</sup> Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ.5, եր., 1994, էջ 40 (այսուհետև ԵԼԺ, հատորն ու էջը):

<sup>34</sup> Կոմիտասը մտադիր էր «Մասնա ծեփ»-ի թեմայով գրել եռագրություն և որոշ աշխատանքներ այդ ուղղությամբ նա կատարել է: Լիբրետոն համաձայնել էր գրել Մանուկ Աբեղյանը: Պահպանվել է «Դավթի և Կրտսեր Մհերի վեճը» տեսարանի ծայնագրությունը, ինչը վկայում է Կոմիտասի այդ և մյուս օպերաների վրա կատարած աշխատանքների մասին: Երգահանը զգում էր, որ ժողովրդի պատմության հերոսական էջերը, նրա էպիկական ստեղծագործությունները և պետք է երաժշտական կերպարանք ստանան: Պահպանվել է նաև նրա «Վարդան» պատմական օպերայի դերաբաշխումը, ինչը դարձյալ վկայում է այդ մտադրությունը իրագործելու երաժշտի ջանքերի մասին: Ավելի մանրամասն տես Ռ.Աթայան, «Կոմիտասի ծեռագրերը» հոդվածը, «Սովետական արվեստ», 1969, թիվ 4, էջ 44-54:

առաջնային: Կոմիտասի կարծիքով՝ «Անուշն» այնքան բանաստեղծական է, որ կարծես «որոշ հատվածների երաժշտությունը հենց ինքն է գրել, ուրեմն նա էլ երաժշտական հոգի ունի»<sup>35</sup>:

Եվ Կոմիտասը ստեղծագործական մեծագույն ոգևորությամբ ձեռնամուխ եղավ «Անուշ» օպերայի աշխատանքներին: Այն, որ նշված չորս օպերաներից Կոմիտասը ամենից սիրով աշխատում էր «Անուշի» վրա, վկայում են իշխանուհի Մարիամ Թումանյանին և Հովհ. Թումանյանին գրած նրա նամակները, ինչպես նաև կոմիտասագետներ Ռոբերտ Աթայանը, Ս. Գասպարյանը, Իգարելա Յոլյանը, Խաչիկ Բաղիկյանը և ուրիշներ<sup>36</sup>:

Պահպանվել է Կոմիտասի «Անուշի» «Բարձր սարեր» երգի մեկ տարբերակի սկիզբը՝ ուրվագծային պարտիտուրան, «Կոխի» տեսարանից մի հատված՝ գրված հայկական նոտաներով, «Ամպի տակից», «Այ պաղ ջրեր», «Աղջի անաստված», «Ասում են ուռին», «Այ թուխ մազավոր աղջիկ», «Աղջի բախտավոր», «Սիրուն աղջիկ, ինչ ես լալիս», «Վեր կաց, վեր, իգիթ», «Բերում են, հրեն» և այլ հատվածներ:

Լիբրետոն գրելը հանձն էր առել Թումանյանը, սակայն Կոմիտասը, ավելի, քան բանաստեղծը, եռանդուն մասնակցություն է ցուցաբերել այդ գործին և հանգամանորեն շարադրել է իր ստեղծագործական նկատառումները: Կոմիտասը, գուցե Թումանյանի պարտադրանքով, գուցե և ինքնական, պոեմի բովանդակությունը պահել է առանց փոփոխության և պահպանել է գործող բոլոր անձանց: Կոմիտասի ձեռագիր նշումներից պարզվել է, որ նա փորձել է օգտագործել և՛ հայկական ժողովրդական, և՛ հոգևոր երաժշտության նմուշներ, թե ինչպես և ինչ չափով՝ երաժշտագետները դժվարանում են ասել, քանի որ օպերան անավարտ է մնացել: Պահպանված հատվածների մանրագնին ուսումնասիրությունից հետո Ռ.Աթայանը գրում է. ««Անուշ» օպերայի մեղեդիական ոճը ընդարձակ է և հարուստ: Հիմնական տեղը բռնում է, իհարկե, հայկական գյուղական երգի ինտոնացիան: Օպերայում Կոմիտասն ունի գյուղական երգի ոճով գրված կտորներ, ժողովրդական որոշ եղանակներ էլ նա օգտագործել է անփոփոխ, կամ այս կամ այն չափով փոփոխված վիճակում: Սակայն դրանց հետ հանդիպում են քաղաքային և գուսանական երգերին հատուկ ինտոնացիաներ, որոնք, լինելով հմտորեն օգտագործված, միաձուլվում են օպերային ինքնատիպ ինտոնացիայի մեջ»<sup>37</sup>:

Օպերան ավարտին չհասցնելու պատճառներից մեկը թերևս Հովհ. Թումանյանի և Կոմիտասի բազմազբաղ լինելն էր: Բանաստեղծը այդպես էլ ժամանակ չէր գտնում ամեն անգամ արձագանքելու, համատեղ աշխատելու Կոմիտասի խնդրանքին: Մինչդեռ երաժիշտը պատրաստ էր իր բոլոր գործերը հետաձգել Թումանյանի հետ հարմարվելու նպատակով:

1908 թ. ամռանը՝ հուլիսի 2-ին, Կոմիտասը Էջմիածնից բանաստեղծին գրում էր. «Սիրելի Հովհաննես,

Երեկ Լիպարիտն այստեղ էր, ասաց, որ Դիլիջան չես գնում: Դի՞շտ է, եթե այո՝ ինչո՞ւ չես գրում մի երկտողով, ես արդեն պատրաստվում էի ճանապարհ ընկնելու. ասաց, որ ձեր գյուղն ես գնալու, շատ լավ. եթե այդպես է, էլի գրիր, կարող եմ

<sup>35</sup> Խ.Գ. Բաղիկյան, Կոմիտասը ինչպիսին եղել է, Ե., 2002, էջ 127:

<sup>36</sup> Տե՛ս Ս.Գ.Գասպարյան, Կոմիտաս, կյանքը, գործունեությունը, ստեղծագործությունը, Ե., 1961, էջ 145:

<sup>37</sup> Ռ.Աթայան, «Կոմիտասի ձեռագրերը» հոդվածը, «Սովետական արվեստ», 1969, թիվ 4, էջ 44-54:

ծեր գյուղն էլ գալ և տեղական խոսակցության ձայնաստիճանը և ուրիշ կարևոր նյութեր կգրեն և կուսումնասիրեն: Շուտով գրի՛ր, որովհետև գործերիս դասավորությունը քեզնից է կախված»<sup>38</sup>:

Հավանաբար, Կոմիտասի և Թումանյանի մեջ եղել էր նախնական պայմանավորվածություն՝ 1908 թ. ամռանը Դիլիջանում աշխատելու մասին: Դեռևս նույն թվի գարնանը Թումանյանը խոստացել էր անձամբ գալ Էջմիածին: Սակայն բանաստեղծը ժամանակ չի գտնում Էջմիածին գնալու, և Կոմիտասն էլ մայիսին, լինելով Թիֆլիսում, չի կարողանում հանդիպել Թումանյանին: Մայիսի 24-ին Կոմիտասը գրում էր.

«Սիրելի Յովհաննես,

Ափսոս, որ Տիֆլիս եղած ժամանակս քեզ տեսնել չկարողացայ. պետք է մի լավ ծեծելի: Ա՛յ աղբեր, քեզ սպասելով՝ աչքս ջուր դառավ, չէ՞ որ դու ասել էիր, թե Ջատկի տոներից յետոյ կգաս մի քանի օրով: Էսա Համբարձումն էլ անցաւ, դեռ դու չերևացիր...

Աղբեր, վաղուց է սկսել եմ և բառական բան գրել քո «Անուշից», բայց դեռ պակասատր բաներ շատ կան, որպէսզի մի ամբողջութիւն դառնայ: Այս գիրս առնելուն պէս գրիչդ կառնես ու ինձ մի դրական բան կգրես: Այս ամառվան արձակուրդին պետք է զբաղուեն առաւելապէս «Անուշով»<sup>39</sup>:

Կոմիտասը խնդրում էր բանաստեղծին գեթ մի քանի օր հատկացնել իրեն, որպէսզի կարողանա օպերայի աշխատանքները շարունակել. «Կգաս և առանց այլևայլութեան կիջնես ինձ մօտ, և միասին կաշխատենք: Գալուդ օրը և ժամը հեռագրով իմացուր, որ կառք ուղարկեն քեզ համար կայարան»<sup>40</sup>:

Պատասխան նամակում Թումանյանը բացատրել է, որ վատառողջ լինելու պատճառով չի կարող Էջմիածին գալ: Ամբողջ կյանքում ջերմից և թոքերի թուլութունից տառապող բանաստեղծը հավանաբար մտադրվել էր հանգստանալ Դիլիջանում, և այդ պատճառով Կոմիտասին խնդրում էր հանդիպել այնտեղ: Թումանյանի այդ նամակը չի պահպանվել, սակայն Կոմիտասի պատասխան նամակից կարելի է կռահել նրա բովանդակությունը: Կոմիտասը գրում էր. «Էջմիածին չեկար, մոծակից վախեցար. Էդ պի՞ծի մոծակն ի՞նչ է, որ մարդս նորանիցն վախենայ. ես քեզ այնպիսի տեղ տայի, որ մոծակ չէ, մոծակի աղբերն իր ճտերով չէր կարող մուտք գործել... Ուզում ես Դիլիջան, բարի՛. Դաշնամուրի հոգ մի՛ անիր. իմ գալու կամ քո գալուդ նպատակն է լինելու միայն և էք բառերը՝ բանաստեղծութիւնը լրացնել դերակատարներով և երգերով, մի խօսքով՝ կազմել լիրիքթօս»<sup>41</sup>:

1908թ. հունիսի սկզբին Կոմիտասը նույնպէս շատ զբաղված էր: Նա հողվածներ էր գրում եվրոպական թերթերի և ամսագրերի համար: Ու թեև որոշել էր այդ նպատակով ամառն անցկացնել Էջմիածնում, սակայն ընդառաջ է գնում Թումանյանի ցանկությանը և խոստանում է տասը օրով գնալ Դիլիջան: Սակայն շուտով նա պարզում է, որ Թումանյանի ծրագրերը փոխվել են, և բանաստեղծը չի կարող գալ Դիլիջան:

<sup>38</sup> Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 54:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 53:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 52:

Նույն թվականի հուլիսի 2-ին Հովհ. Թումանյանը Ավետիք Իսահակյանին խոստովանում է, որ ընտանիքին ուղարկել է Դսեղ, իսկ ինքը «Լուսաբերի» տպագրությունը ժամանակին հասցնելու համար առնվազն մինչև հուլիսի վերջը խիստ զբաղված է լինելու. «Էս ամառ մտածում էի, որ մի երկու ամսով մի անկյուն քաշվեմ, մի քիչ դինջանամ, մի քիչ էլ պարապեմ, էդ էլ չեղավ»<sup>42</sup>:

«Մի անկյուն» ասելով՝ Թումանյանը հավանաբար նկատի է ունեցել նախ Դիլիջանը, ապա՝ Դսեղը: Հենց այդ օրերին են Լեոն և Ավ. Ահարոնյանը բանաստեղծին խնդրել իրենց հետ միասին արտասահման մեկնել: Սակայն պարտատերերի առկայությունը և նյութական միջոցների սուղ լինելը արգելել են Թումանյանին ընկերակցել արտասահման մեկնող գրչակից բարեկամներին: Իսկ Դիլիջանը Դսեղով փոխելու բանաստեղծի որոշումը այս անգամ պայմանավորված էր ոչ թե հայրենի բնության ու հարազատների կարոտով, այլ նրանով, որ եղբայրները որոշել էին ունեցվածքը բաժանել: Թումանյանը ուզում էր, որ ամեն ինչ այնքան արդար լինի, որ եղբայրներից և ոչ մեկը չգրկվի, ու հարազատները չնեղանան միմյանցից: Սակայն բանաստեղծի Դսեղ գնալու մտադրությունն էլ չի իրագործվում, քանի որ 1908 թ. օգոստոսի սկզբին մեկնում է Բաքու, որտեղ հրատարակվում էր նրա բանաստեղծությունների նոր ժողովածուն: Իսկ օգոստոսի 13-ին շտապում էր հասնել Թիֆլիս, ավագ դատեր՝ Աշխենի, զիննազիայի 8-երորդ մասնագիտական դասարանում սովորելու համար դիմում ներկայացնելու և 50 ռուբլի ուսման վարձը վճարելու նպատակով: Այս հանգամանքներով էր պայմանավորված 1908 թ. ամռանը Կոմիտասի և Թումանյանի նախատեսած հանդիպումների ձախողումը:

Քիչ անց ուժեղանում են քաղաքական հետապնդումներն ու հալածանքները Թումանյանի նկատմամբ, և տարեվերջին բանաստեղծը հայտնվում է բանտում: 1909 թ. փետրվարի 14-ին Կոմիտասը գրում էր իշխանուհի Մարիամին. ««Անուշ» առաջ է գնում, էլի մի շաբթ նոր բաներ գրեցի: Մնացել են մոլորուած, Յովհաննէսի բանտարկութիւնն էր պակաս, էլի կիսատ մնաց «Անուշի» երգական խմբագրութիւնը. յոյս ունէի, որ կը գար այս տօներին և վերջ կը տայինք, այդ էլ այդպէս մնաց»<sup>43</sup>:

Իհարկէ, Թումանյանի բանտարկությունը հուզել էր Կոմիտասին ոչ թե և ոչ միայն «Անուշ» օպերայի աշխատանքներին խանգարելու առումով: Առաջին հերթին նրան հետաքրքրում էր ինչպես Թումանյանի, այնպես էլ մյուս հայ բանտարկյալների ճակատագիրը: Իշխանուհուն ուղղված նույն նամակում Կոմիտասը գրում է. «Մեր Յովհաննէսի չարձակուելը շատ վատ տպաւորութիւն թողեց վերաս, որքա՛ն զրկում է մեր գրական-բանաստեղծական կեանքը նորա անգործ բանտումն ընկած մնալովը: Իհարկէ, երևի դեռ երկար կը պահեն, մինչև ամբողջ կծիկը բաց անեն: Լսում է, որ շատ խիստ որոնում են զանազան տեղերում մի շաբթ անձանց: Այս խմորը դեռ շատ ջուր կառնի»<sup>44</sup>:

Կոմիտասին ներշնչել էր ոչ միայն Թումանյանի «Անուշը», այլև «Կաքավի երգը» բանաստեղծությունը: Գաղտնիք չէ, որ նրա երաժուական ժառանգությունը

<sup>42</sup> ԵԼԺ 10, 42:

<sup>43</sup> Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 51-52:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 53-54:

կազմված է գերազանցապես ժողովրդական երգերի մշակումներից: Մինչդեռ «Կաքավի երգը» Կոմիտասի ինքնուրույն մեղեդի ունեցող ստեղծագործություններից է:

Նույն օրերին, երբ ցարական իշխանությունների կողմից հալածանքների էր ենթարկվում Հովհ. Թումանյանը, ուժգանում էր Մայր Աթոռ Էջմիածնի որոշ միաբանների շարությունն ու նախանձը՝ Կոմիտաս վարդապետի հանդեպ: Կոմիտասի հալածանքները Էջմիածնում սաստկանում են հատկապես Խրիմյան Հայրիկի մահից հետո, երբ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցը տասն անգամ կրճատում է Կոմիտասի աշխատավարձը: Եվ Կոմիտասի գերզգայուն ինքնասիրությունը ու վիրավորված արժանապատվությունը ընդվզում է մարդկային անարդարության դեմ: Հոգևոր Մինողը ճեմարանում նրա դերն ու ներկայությունը ավելորդ է համարում, և Կոմիտասը հրաժարվում է այնտեղ պաշտոնավարելուց:

Նույն շրջանում ճեմարանից հեռացվում են Եղիշե Թադևոսյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Մանուկ Աբեղյանը, Վրթանես Փափազյանը: Էջմիածնի խեղդող մթնոլորտի մասին Կոմիտասը գրում էր Մարգարիտ Բաբայանին. «Ոչ խելք են թողել, ոչ էլ միտք: Անհանգիստ բան են եղել, հոգիս բերանս է հասել, երևակայի, որ շրջապատված եմ թանձր մառախուղով, ուզում եմ լույս, պայծառ լույս տեսնել, հեռանալ վեր, շատ վեր, այրող արևի հետ ապրել, բայց ճանապարհ չեմ գտնում, անիրավ օդի մեջ խեղդամահ եմ լինում: Մարդ չկա, որին բանաս սիրտդ, մարդ չկա, որից մի բան լսես, նստում եմ առավոտից մինչև իրիկուն բուբուխ պես... ես զարմանում եմ, թե ինչու մինչև այժմ դեռ չեմ խելագարվել այս մթնոլորտի խարդախ վայրերում»<sup>45</sup>:

1909 թ. Կոմիտասը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի վարչության կողմից հրավիրվում է դպրոցի երգչախումբը ղեկավարելու և հոգևոր երաժշտության գալիք փառատոնին մասնակցելու նպատակով: Կոմիտասի համար այդ հրավերը ճիշտ ժամանակին էր, նույնիսկ ինչ-որ տեղ փրկություն էր, քանի որ նա ստանում էր հնարավորություն ազատվելու Էջմիածնի ճնշող, խեղդող մթնոլորտից:

1909թ. մարտի առաջին օրերն էին, Թումանյանը դեռ Սետեխի բանտում էր, այդ պատճառով էլ նրանք չեն հանդիպում: Բանտի պատուհանից Ջիվանու հուղարկավորությունը հայացքով ուղեկցող Թումանյանն ու Ավ. Իսահակյանը դժվար թե մեծ թափոթի մեջ նկատեին Կոմիտասին: Հովհ. Թումանյանը բանտից ազատվում է միայն 1909թ. հունիսի 13-ն, այն էլ՝ պայմանականորեն, իսկ Կոմիտասը մինչ այդ վերադարձել էր Էջմիածին:

Էջմիածնում ոչինչ չէր փոխվել, ամեն ինչ նույնն էր: Ստեղծված անբարյալ ցական մթնոլորտից Կոմիտասն իր դժգոհությունն է հայտնում Արշակ Չոպանյանին հետևյալ խոսքերով. «Տե՛ս աչքովդ, թե ինչպես մարդիկ ավերում, կործանում են պատիվ, անուն, եկեղեցի, սրբություն, ազգություն և ինչպես գործիք են դառնում չարի ձեռքին, և ապա մի՛ լցվիր, մի՛ լար, մի՛ ողբա Խորենացու պես՝ իր իսկ ողբով. այժմ նույն պատկերն է մեր շուրջը, և նորա ուրվականն է ողբում մեր անբուժելի ցավերը»<sup>46</sup>:

Էջմիածնում Կոմիտասի հալածանքները կարելի է նույնիսկ «օրինաչափ» համարել, քանի որ «վերը»՝ հանճարը, միշտ էլ հալածվում է «վարի»՝ միջակության կող-

<sup>45</sup> Խ.Գ. Բաղիկյան, Կոմիտասը ինչպիսին եղել է, Ե., 2002, էջ 209:

<sup>46</sup> Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 145:

մից: Բացի այդ, Էջմիածնում հոգևորականներից շատերն էին զգում, որ վարդապետ Կոմիտասը ամենևին էլ իրենց նման չէ: Դերենիկ Դեմիրճյանը նկատել է, որ Կոմիտասի մեջ «ամեն ինչ» կար, բացի հոգևորականի կոչումից կամ հատկությունից. «Իր խոսքի, վարմունքի, գրույցի և մտահոգությունների մեջ ոչ մի անգամ չեմ նկատել եկեղեցականի հանգամանքը: Նրա ֆարաջան պարզապես հագուստ էր մի աշխարհական և ժողովրդական մարդու, որ բախտի բերմամբ ընկած էր վանք»<sup>47</sup>:

Հայտնի է, թե որքան ծանր ու դժվարին կյանքով է ապրել Կոմիտասը, ինչպիսի նյութական խոչընդոտների է հանդիպել՝ իր առաքելությունը կատարելու ճանապարհին: Թումանյանը իր հանրահայտ «Գրականությանն ազգային պաշտպանություն պետք է լինի» ծրագրային հոդվածում պնդում էր, որ արվեստագետն ինքը մի ստեղծագործություն է, որին «մեծ չափով մասնակից են իրենց հայրենիքները և իրենց շրջապատը»<sup>48</sup>: Ազգային հանճարին անվանելով իր ժողովրդի «ամենամվիրական ստացվածքը», ազգային ոգու արտահայտությունը և հզորացման երաշխիքը, Թումանյանը հետագայում՝ 1916 թվականին, գրում էր. «Կոմիտաս վարդապետի պես մի անձնավորություն, նույնիսկ Եվրոպայում հիացմունք առաջ բերելուց հետո էլ չի կարողանում իր հայրենիքում մի դաշնամուր ձեռք բերի կամ հնարավորություն՝ զավառները ճանապարհորդելու և կատարելու մի գործ, որ միայն ինքը կարող է կատարել, և որն էնքան պատիվ է բերում ամբողջ ազգին»<sup>49</sup>: Իշխանուհի Մարիամ Թումանյանին ուղարկած նամակում Կոմիտասն ինքը նույնպես իր դաշնամուր չունենալը անվանել է մեծ չարիք. «Մեծ չարիքն այն է, որ երաժշտական գործիքներ չունեն, որ գրածներս անմիջապես փորձել կարողանամ և ուղղեն, գոգեն, խուցումս մի շատ փոքրիկ (4ութնյակ) երգեհոն ունեն (Harmonium). ինչ արած, անճարը կերել է բանջարը»<sup>50</sup>:

Ավելորդ չէ հիշեցնել, որ այդ «անճարը» Միջազգային երաժշտական ընկերության հիմնադիր անդամներից էր և դեռևս 1899 թ. Բեռլինում այդ ընկերության սրահում հայ և գերմանացի ուսանողների, երաժշտագետների և պրոֆեսորների ներկայությամբ նրա կարդացած դասախոսությունը հիացրել ու զարմացրել էր բոլորին: Այդ մասին Բեռլինի համալսարանի երաժշտության պրոֆեսոր, Միջազգային երաժշտական ընկերության նախագահ և Բեռլինի արքայական համալսարանի երաժշտության պատմության ուսուցչապետ Օսկար Ֆլայշերը, որը աշխարհի երաժշտական անցուդարձի քաջահմուտ երաժշտական տեսաբան էր, ասել էր. «Կոմիտասի կարդացած դասախոսությունը հայ ժողովրդի և հոգևոր երաժշտության մասին պետք է մնա անմոռանալի: Առաջին անգամն է, որ Բեռլինում այսպիսի մի դասախոսութիւն է կարդացուում և զուգե մինչև այժմ Պարիսի աշխարհանդէսներում անգամ այդ տեսակ դասախոսութիւն չի կարդացուել»<sup>51</sup>:

Դաշնամուր չունեի այն մեծ երաժիշտը, որը Կ.Պոլսի «Պըտի Շան» սրահում 1912 թ. ասպրիլի 14-ին և 21-ին տված բարեգործական համերգների շնորհիվ հայ երաժշտանոցի նյութական ֆոնդը ավելացնում էր չնախատեսված խոշոր գու-

<sup>47</sup> Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու 14 հատորով, հ. 14, Ե., 1987, էջ 237:

<sup>48</sup> ԵԼԺ 7, 237:

<sup>49</sup> ԵԼԺ 7, 242:

<sup>50</sup> Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 50:

<sup>51</sup> «Նոր դար», 1899, էջ 115:

մարմներով: Միայն ապրիլի 21-ի մեկ համերգի հասույթը հասել էր հազար ոսկու, որը Կոմիտասը տրամադրել էր Ազգային հիվանդանոցին<sup>52</sup>:

Դաշնամուր չուներ Եվրոպայի նվաճած այն երաժիշտը, որի ոտքերի առջև Փարիզի համերգասրահում ծնկի էր եկել ֆրանսիացի մեծ կոմպոզիտոր, դաշնակահար Կլոդ Դեբյուսին և համբուրներով Կոմիտասի ձեռքերը, ասել. «Հանճարեղ հայր Կոմիտաս, ձեր երաժշտական հանճարին առջև կխոնարհիմ...»<sup>53</sup>

Կոմիտասը, իհարկե, վերջիվերջո դաշնամուր ունեցավ, թեև մեծ ուշացումով: Ունեցավ միայն 1909 թվականին՝ կյանքի քառասուներորդ տարում: Այդ դաշնամուրը նրան նվիրեց մեծահարուստ բարեգործ Ալեքսանդր Մանթաշյանը: Այն ստանալուց հետո Կոմիտասը իր ապրումների մասին գրում էր Մ.Բաբայանին. «Այժմ տանս Schreder ֆիրմայի մեծ դաշնամուր ունեմ: Դու կզգաս իմ ուրախության չափը... Աչքերիս չէի հավատում, որ վերջապես ես էլ մարդու հաշիվ եմ դառնում, հարմարություն ունիմ աշխատելու, աշխատելու, էլի աշխատելու»<sup>54</sup>:

Կոմիտասը երջանկությունից քարացել ու արտասվել է իր ցուրտ սենյակում՝ տեսնելով շքեղ երաժշտական գործիքը: «Ուրախությունիցս քարացել էի մի վայրկյան, ապա արտասուքի հեղեղը սկսավ գլորվել աչքերիցս... Ես էլ, սիրտս էլ, միտքս էլ, կյանքս էլ հանգստացան»<sup>55</sup>:

1909 թ. սեպտեմբերի 5-ին Կոմիտասը դիմում է կաթողիկոս Մատթեոս Իզմիրլյանին. «Վեհափառ Տե՛ր... Քսան տարվա ընթացքում շրջապատն ինձ թույլ չի տվել այն անելու, ինչ կարող էի, որովհետև տեսա միայն որոգայթ ու անարդարություն: Նյարդերս թուլացել են, այլևս տոկալու ճար ու հնար չունեմ, որոնում եմ հանգիստ, չեմ գտնում, ծարավ եմ ազնիվ աշխատանքի, խանգարվում եմ, փափագում եմ հեռու մնալ, խցել ականջներս՝ չլսելու համար, զոցել աչքերս՝ չտեսնելու համար, սանձել զգացումներս՝ չվրդովվելու համար, բայց... զի մարդ եմ, չեմ կարողանում: Խիղճս մեռնում է, եռանդս՝ պաղում, կյանքս մաշվում է, և միայն վարանմունքն է բուն դնում հոգուս ու սրտիս խորքում»<sup>56</sup>:

Սակայն ժամանակին իրեն բաժին ընկած աքսորից ու հալածանքներից հյուծված Մատթեոս Իզմիրլյանը ընդամենը մեկ տարուց մի փոքր ավելի մնաց կաթողիկոսի գահին: Վեհափառի թաղման արարողությունը տեղի ունեցավ 1910թ. դեկտեմբերի 20-ին: Այդ օրերին Թումանյանը նույնպես Էջմիածնում էր, ու թեև Կոմիտասը անվերջ զբաղված էր պատարագի նախապատրաստությամբ և աշխատում էր «օրը 14 ժամ», սակայն, անշուշտ, նրանք հանդիպումներ ունեցել են և գրույցի հիմնական նյութն էլ եղել է կաթողիկոսի մահվան հանգամանքները:

Թումանյանի սերը Կոմիտասի երգարվեստի նկատմամբ նույնքան մեծ էր և խորը, որքան Կոմիտասի հիացմունքը Թումանյանի ստեղծագործության հանդեպ: Բանաստեղծի դուստրը՝ Նվարդը, հիշում է, թե ինչպես մի անգամ, երբ Կոմիտասը երգում էր «Անտունին», պարզ երևում էր, թե ինչպես է բանաստեղծը զգում և ապրում յուրաքանչյուր բառը, հնչյունը. «Ինքն էլ սկսեց երգել Կոմիտասի հետ

<sup>52</sup> Տե՛ս ժամանակակիցները Կոմիտասի մասին, Ե., 1960, էջ 26:

<sup>53</sup> Խ.Գ. Բաղիկյան, Կոմիտասը ինչպիսին եղել է, Ե., 2002, էջ 183:

<sup>54</sup> Նույն տեղում, էջ 211:

<sup>55</sup> Նույն տեղում:

<sup>56</sup> Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 57-58

և հետո ասաց. «Միրոս նման է էն փլած տըրներ...»՝ ժողովուրդն իր ամբողջ պատմությունն է տվել. ժողովրդական ստեղծագործության գոհար է սա»<sup>57</sup>:

Հովհ. Թումանյանը Կոմիտասի երգերից հատկապես շատ էր սիրում «Մոկաց Միրզան», որը, Նվարդի խոսքերով, նրա վրա մեծ տպավորություն էր թողնում<sup>58</sup>: Եթե նույնիսկ Նվարդի վկայությունը չլիներ, կարելի էր համոզված ասել, որ Թումանյանը Կոմիտասի երգերից պիտի նախընտրեր հենց «Մոկաց Միրզան», քանի որ այն էպիկական թեմայով գրված, իր տեսակի մեջ «մեր մոռոդիկ երգի» դասական օրինակ է, որը բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում: Ի տարբերություն գրականության, ուր հատկապես ժողովրդական բանահյուսության և նրա մշակումների մեջ էպիկականը գերիշխող է, և նրանցում զգալի տեղ է գրավում էպոսը իր ճյուղավորումներով, երաժշտական բանարվեստում, երաժշտագետների դիտարկումով, «էպիկական բնույթի ստեղծագործությունները շատ քիչ են պահպանվել»<sup>59</sup>:

Բանաստեղծը սիրում էր նաև «Տեր Կեցցոն»՝ հիանալով նրա՝ հայության պահպանման ու լուսավորության գաղափարի և երաժշտության ներդաշնակությամբ: Մի առիթով Կոմիտասը Թումանյանին ասել է. «Ով ուզում է ստեղծել հայ կուլտուրական երաժշտություն, նա պիտի հիմք ընդունի ժողովրդական երգը, նա պիտի ղեկավարվի այդ երգի ոճական սկզբունքներով, այլապես նրա ստեղծած երաժշտությունը չի լինի հայկական երաժշտություն»<sup>60</sup>:

Ավելի ուշ՝ Հայ գրողների Կովկասյան ընկերությունը ղեկավարելու տարիներին, Թումանյանը ձգտում էր ազգային-մշակութային նոր շարժում առաջ բերել՝ երաժշտական-գրական երեկույթներ կազմակերպելու միջոցով: Եվ առաջինը, ում նա դիմեց ազգային արվեստի զարգացմանը իր նպաստը բերելու խնդրանքով, Կոմիտասն էր:

1910 թվից մինչև 1913 թ. հունիսի 17-ը Կոմիտասը արտասահմանում էր, իսկ 1913 թ. հունիսի 13-ին՝ դարձյալ Թիֆլիսում: Այստեղ նրա պատվին ճաշկերույթ է կազմակերպվում, քանզի քառամյա բացակայությունից հետո Թումանյանը Կոմիտասին տեսնելու առիթը բաց չէր թողնի: 1913 թ. հուլիսի 11-ին Գարեգին Հովսեփյանին ուղղված Թումանյանի նամակում կարդում ենք. «Երաժշտական մասի կազմակերպության և ղեկավարության համար խնդրել եմ Կոմիտաս վարդապետին»<sup>61</sup>:

Ըստ ամենայնի, Հովհ. Թումանյանը Կոմիտասին դիմել է նամակով՝ 1913 թ. հունիսի վերջերին կամ հուլիսի սկզբին: Հուլիսի կեսերին Կոմիտասը կրկին եղել էր Թիֆլիսում, սակայն չէր կարողացել տեսնել Թումանյանին: Նա Կ. Պոլսից եկել էր շատ կարճ ժամանակով, մեկ-երկու ամսով՝ Էջմիածնում ձեռագրեր ուսումնասիրելու և «գեղջուկ երգեր» հավաքելու: Սեպտեմբերին կրկին անպատճառ պետք է լիներ Կ. Պոլսում, քանի որ արդեն հաստատվել էր այնտեղ, հիմնել իր «անձնական դպրոցը»՝ խմբավարներ ու երգիչներ կրթելու նպատակով, կազմել էր 300 հոգուց բաղկացած «Գուսան» երկսեռ երգչախումբը: Այդ պատճառով էլ նա ստիպ

<sup>57</sup> Նվարդ Թումանյան, Գուշեր և գրույցներ, Ե., 1987, էջ 56:

<sup>58</sup> Նույն տեղում:

<sup>59</sup> Ս.Գ. Գասպարյան, Կոմիտաս. կյանքը, գործունեությունը, ստեղծագործությունը, Ե., 1961, էջ 130:

<sup>60</sup> ԹԺ, 574:

<sup>61</sup> Գովհաննես Թումանյան, ԵԼԺ, հ. 10, էջ 181: Տե՛ս Գ. Հովսեփյան, Մանրանկարչության արվեստը հայոց մեջ, Թիֆլիս, 1902:

ված է լինում Գրողների ընկերության երեկույթներում դասախոսություններով հանդես գալու Թումանյանի առաջարկը մերժել:

1913 թ. հուլիսի 19-ին՝ արդեն Էջմիածնից, Կոմիտասը գրում էր Թումանյանին. «Սիրելի Յովհաննես, Հակառակ բոլոր փափագիս, չկարողացայ լեզ տեսնել Տըփլիսիում: Ես եկել եմ, սիրելի՛ս, միայն շատ կարճ ժամանակով, այստեղ... Շատ եմ ցաւում, որ չեմ կարողանալու «Հայ գրողների ընկերութեան» սարքելիք գրական երեկույթին մասնակցել, զի, որպէս ասացի, պաշտօնովս կապուած եմ Պոլսում: Յաջողութիւն եմ ցանկանում ընկերութեանդ»<sup>62</sup>:

1913 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Կոմիտասը Էջմիածնի մատենադարանի ձեռագրերի՝ խազերի ուսումնասիրությանը էր զբաղվում և շրջում էր Երևանի մահանգի՝ Իգդիրի, Կոտայքի, Շիրակի, Ապարանի, Գառնի-բասարի գյուղերը, գրի առնում 100-ից ավելի հին ու նոր երգեր: Օգոստոսի առաջին տասնօրյակում, հավանաբար, 8-ից 11-ն ընկած ժամանակահատվածում, Կոմիտասը 3-4 օր մնում է Ապարանում, որտեղ զգալի թիվ էին կազմում Մուշից գաղթածները: Ապարանի գյուղերից մեկում երեխաները շրջապատում են երգահանին և մեկը մյուսին հերթ չտալով՝ իրենց իմացած երգերն են երգում վարդապետի համար: Կոմիտասը, գրի առնելով դրանք, երեխաների համար երգում ու սովորեցնում էր իր համար շատ սիրելի «Կաքավի գովքը», որը Թումանյանը առաջին անգամ տպագրել էր 1907 թ. «Հասկերի» հեռու առաջին համարում, և որին սիրով աշխատակցում էր նաև Կոմիտասը: Ամենևին պատահական չէ, որ Կոմիտասը այդքան շատ էր սիրում հատկապես «Կաքավի գովքը»: Բանաստեղծական ակունքը ժողովրդական էր և «Վանեցվոց երգ կաքավու» վերնագրով տպագրվել էր 1850 թ. «Բազմավեպում», իսկ 1860-ին՝ Մ. Միանսարյանի «Քնար հայկականում»:

Հովհ. Թումանյանը ժողովրդական երգի վեց քառատողից թողել էր չորսը՝ դուրս հանելով երկրորդ և վեցերորդ քառատողերը, Վանի բարբառը վերածելով ժողովրդական լեզվի, փոխելով մի շարք տողեր ու բառեր: Ինչպես պատմում են երգահանի կենսագիրները, «Դե հիմա էլ դուք լսեք ինձ ու սովորեք այս երգը՝ «Արև բացվեց թուխ ամպերեն»... երգում էր Կոմիտասը ու պահանջում, որ երեխաները խմբով երգեն այդ երգը»<sup>63</sup>:

Կոմիտասին և Թումանյանին նույնչափ հետաքրքրել են նաև մանկական գեղագիտական դաստիարակության խնդիրները: Ամենևին պատահական չէ, որ նրանք երկուսն էլ նույն եռանդով ու խանդավառությամբ աշխատակցել են «Հասկեր» ամսագրին: Ինչպես վկայում է Աղավնի Մեսրոպյանը, 1914 թ. աշնանը, երբ Կոմիտասը երաժշտության դասեր է ստանձնում Պոլսի Ազգային Կեդրոնական վարժարանի և Նիկողոսյան դպրոցներում, շատերին է զարմացնում, երբ այդքան բազմազբաղ լինելով, «ջերմ փափագ» է հայտնում. «Գոնե շաբաթը երկու ժամ զբաղվել նաև մանկապարտեզի 7-8 տարեկան երեխաներու երգ ու պարի դասերով»<sup>64</sup>:

Վրա էր հասել Առաջին համաշխարհային պատերազմը: Հայ մշակույթի երկու հսկա վեմերը, Հովհ.Թումանյանն ու Կոմիտասը, հարազատ ժողովրդի երկու հատվածների նման՝ հայտնվել էին արյունոտ ռազմաճակատի տարբեր կողմե-

<sup>62</sup> Կոմիտաս, Նամակներ, Ե., 2000, էջ 55:

<sup>63</sup> Խ.Գ. Բաղիկյան, Կոմիտասը ինչպիսին եղել է, Ե., 2002, էջ 308:

<sup>64</sup> Նույն տեղում, էջ 348:

րում: 1915 թ. ապրիլի 11-ին (24-ին) Կոմիտասը այն 217 հայ մտավորականների թվում էր, որոնց թուրքական կառավարությունը դատապարտել էր մահվան: Կոմիտասի բնակարան են ներխուժում թուրք ոստիկանները և Սուլեյման Էֆենդու հրամանով խուզարկում նրա տունը: Հատակին են հայտնվում «Անուշ», «Վարդան» և «Սասնա ծռեր» օպերաների դեռևս կիսատ պարտիտուրաները, ինչպես նաև նրա քսան տարիների տքնաջան աշխատանքը. «Մի ակնթարթում ծվենների փոխված՝ վիրավոր արոր հավքի փետուրների նման, թրթռալով օդի մեջ շաղ եկան հատակին»<sup>65</sup>:

Մեկ շաբաթ շարունակ Կոմիտասի ներման արտոնությունը ստանալու համար պայքարում էին ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաունը՝ կնոջ հետ միասին, Իտալիայի, Բուլղարիայի, Շվեյցարիայի դեսպանները, ինչպես նաև Ավստրո-Հունգարիայի դեսպանն ու նրա կինը: Նրանք դիմումներով հեղեղում են 30-ամյա թագաժառանգ Մեջիթ Էֆենդիին, որը մոլի երաժշտասեր էր և նկարչության սիրահար, բազմիցս լսել էր Կոմիտասի համերգները, որն իր հերթին, իր և կնոջ անունից ծնկաչոք խնդրում էր հորը՝ ազատել Կոմիտասին. «Կոմիտասը հայ չէ, այլ մարդ, որը պատկանում է ողջ մարդկությանը, ինչպես Շեքսպիրը, Չայկովսկին և մյուս տաղանդները»<sup>66</sup>:

Ինչպես հայտնի է, ի վերջո, Կոմիտասի երկրպագուների ջանքերը հաջողությամբ են պսակվում, և նրան հաջողվում է վերադառնալ դժոխքից: Հասնելով Կ. Պոլսի իր բնակարանը՝ նա փորձում էր իրար միացնել պատառուտված թղթերը, սակայն դա գրեթե անհնար էր: Փրկվում են միայն առանձին ձեռագրեր: Այսպես փրկվեցին նաև «Անուշի» ձեռագրերը:

Մակայն այդպես էլ «Անուշ» օպերայի աշխատանքները մնացին սևագիր նշումների և նախնական փորձի սահմաններում: Հայտնի է, որ 1919 թ. գարնանը Կ. Պոլսի «Պըտի Շան» ձեռնարկի թատրոնի սրահում դերասան Աշոտ Մադաթյանի գլխավորությամբ և հիմնականում՝ Կոմիտասի «Գուսան» երգչախմբի մասնակցությամբ ներկայացվում են որոշ հատվածներ «Անուշից»: «Հայ հասարակությունը օվաքցիաներով դիմավորեց» Անուշի դերակատար Արշալույս Թերլեմեզյանին, Անուշի մոր դերում հանդես եկող Ատրիկ Դերձակյանին, Տրդատ Նշանյան-«Մոսիին», Երվանդ Չափրաստին, տիկին Հրաչյա Դերձակյանին և ուրիշներին<sup>67</sup>:

Աղավնի Մեսրոպյանի այս վկայությունը նկատի ունենալով, արվեստաբան Մառթեսու Մուրադյանը գրում է. «Իրականում բեմականացվել է Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմը երաժշտական ձևավորմամբ: Ըստ որում՝ երաժշտական հատվածները պատկանել են ոչ թե Կոմիտասին, այլ նրա աշակերտ Վարդան Մարգարյանին, որը 1957 թ., լինելով Երևանում, անձամբ հաստատել է այդ»<sup>68</sup>: Արվեստագետի կարծիքով՝ Կոմիտասի օպերայի ձեռագրերը «դեռևս պատրաստ չեն եղել հրապարակային կատարման համար: Պատահական չէ նաև այն, որ Կոմիտասն իր համերգներում երբեք չի կատարել «Անուշի» որևէ հատված»<sup>69</sup>:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 127:

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 363:

<sup>67</sup> Տես ժամանակակիցները Կոմիտասի մասին, Ե., 1960, էջ 309-310:

<sup>68</sup> Նույն տեղում, էջ 337:

<sup>69</sup> Նույն տեղում:

1920-1921 թթ. ամեն շաբաթ և կիրակի երեկոյան ժամերին Թիֆլիսի կենտրոնում (Վեյյամինովսկայա փողոց, թիվ 22 հասցեում)՝ Հակոբ Անագչյանի և Մարգարիտ Ջարգարյանի տանը, որոնք Կոմիտասի նախնիների հայրենակիցն էին՝ գոյ էին, հավաքվում էին Կոմիտասի մտերիմները: Եվ նրանց թվում հուշագիր Աղավնի Մեսրոպյանը առաջինը նշում է Հովի. Թումանյանի անունը: Անշուշտ, հենց բանաստեղծն է եղել առաջիններից մեկը, որ Կոմիտասին նվիրված հուշ-երեկոներում խորհուրդ է տվել Աղավնուն գրի առնել մեծ երգահանի մասին նվիրական հուշերը: 1920 թ. Թիֆլիսում ստեղծվում է «Կոմիտաս» միությունը, որի նպատակն էր անդամավճարներով, հանդեսների ու հավաքությունների շնորհիվ ձեռք բերած գումարներով սատարել Կոմիտասի ապաքինմանը, օժանդակել նրա աշխատությունների հրատարակմանը: Այս միությունը, որի նախագահն էր նկարիչ Եղիշե Թադևոսյանը, հաճախ էր կազմակերպում հուշ-երեկոներ՝ նվիրված Կոմիտասին: 1921թ. Թումանյանի գլխավորությամբ ու նախաձեռնությամբ հիմնադրվում է Հայ Արվեստի տունը՝ նկարչական, երաժշտական և գրական բաժանմունքներով: Նախագահ է ընտրվում ինքը՝ Թումանյանը և շուտով «Կոմիտաս» միությունը միանում է Հայաստան երաժշտական բաժանմունքին, որը ղեկավարում էր Ռոմանոս Մելիքյանը, և ապա միաձուլվում է նրան<sup>70</sup>:

Ամենայն հայոց բանաստեղծի մահվանից տարիներ անց՝ 1936 թ. մայիսի 28-ին, երբ պետք է հարազատ հողին հանձնվեր Փարիզից Երևան հասած Կոմիտասի աճյունը, Արշակ Չոպանյանի, Փանոս Թերլեմեզյանի, Մանուկ Աբեղյանի, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի, Հովհաննես Հովհաննիսյանի և այլ անհատական պսակների կողքին Հովի. Թումանյանի փոխարեն ծաղկեպսակ էր դրել նրա կինը՝ Օլգա Թումանյանը<sup>71</sup>:

Թե՛ Կոմիտասը և թե՛ Հովի. Թումանյանը, Հրաչյա Աճառյանի խոսքերով՝ «բացառիկ առաքինություններու» ծով էին<sup>72</sup>: Երկուսի կյանքն էլ դարձավ իսկական առասպել: Իսկ նրանց «փառապանծ գործը», ինչպես գրում էր Ավ. Իսահակյանը, «մի չքնաղ հրաշապատում»<sup>73</sup>: Երկուսն էլ մեր ժողովրդի հպարտությունն են, իսկ նրանց թողածը՝ «ազգային անսպառ հարստություն»<sup>74</sup>:

Կոմիտասն ու Հովի. Թումանյանը ունեին վարքագծի, ճաշակի և այլ ընդհանրություններ: Ըստ ժամանակիցների հավաստիացումների, Կոմիտասն էլ սիրել է խոսել առածներով, նրա սիրելի առածներից էր «Անպտուղ ծառին քար չեն գցի» կամ «Շան հաչելով եկեղեցի չի փլվի»: Կոմիտասը սիրել է պատմել ազգային ավանդություններ, ինչպես՝ Հովի. Թումանյանը, նրա նման եղել է զվարճախոս, «սրախոս, կատակաբան, վառվռուն»<sup>75</sup>: Այսպես է վկայում Գարեգին Լևոնյանը: Կոմիտասի նման հատկության մասին հավաստիացնում է նաև Վահան Տեր-Առաքելյանը՝ նշելով. «Պարզ ու կենսուրախ Կոմիտասի մտերմական կատակներն ու սրախոսությունները» գրավիչ էին դարձնում նրան գրուցակիցների համար<sup>76</sup>:

<sup>70</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 323:

<sup>71</sup> Տե՛ս Խ.Գ. Բաղիկյան, Կոմիտասը ինչպիսին եղել է, Ե., 2002, էջ 400:

<sup>72</sup> Տե՛ս ժամանակակիցները Կոմիտասի մասին, Ե., 1960, էջ 75:

<sup>73</sup> Նույն տեղում, էջ 51:

<sup>74</sup> Նույն տեղում:

<sup>75</sup> Նույն տեղում, էջ 237:

<sup>76</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 149:

Լույսի և բնության հանդեպ իրենց սիրով նույնպես կարող էին մրցել Թումանյանն ու Կոմիտասը: Նույնիսկ խենթացած վիճակում, 1921 թ., Կոմիտասը Փանոս Թերլեմեզյանին ասել է. «Հարկավոր է միայն լույս և բնություն»<sup>77</sup>:

Հովհ. Թումանյանին և Կոմիտասին մերձեցնում էր նաև գրական-գեղարվեստական ճաշակի և նախասիրությունների նույնությունը: Երկուսի համար էլ Խ. Աբովյանն էր ներշնչման աղբյուր, պաշտամունք: Կոմիտասն անձամբ խոստովանել է. «Այս Խաչատուր Աբովյանի լուսանկարը իմ ամենամեծ իրս է. իմ էության հետ մաս կազմող...: Մոտ կամ հեռու՝ ուր որ ճամփորդեմ՝ հետս կտանիմ զայն»<sup>78</sup>: Կոմիտասը Խ. Աբովյանին համարել է «իր հոգու հսկիչը», իր «ուսուցիչը», նաև ժողովրդական երաժշտության հետազոտողը, երգիչ-երաժիշտը, որի մասին ասում էր. «Հոգվույս մեջ ամենօրյա արձագանքողն է... Աշխատիլ, տքնիլ, պայքարիլ՝ միայն և միայն ժողովուրդիս և մարդկության համար... Ես երբեք չեմ կարող ասպրիլ առանց Աբովյանի»<sup>79</sup>: Հովհ. Թումանյանը նույնպես մանկության տարիներին Դսեղի հայրական տանն էր ծանոթացել «Վերքի» 1858 թ. հրատարակությանը: Այնուհետև 1883թ. վերընթերցելով «Վերքը», որոշել էր «Աբովյան ու Աղասի դառնալ»<sup>80</sup>:

Կոմիտասի և Հովհ. Թումանյանի աշխարհընկալման մեջ արվեստի դերի, չարի և բարու նկատմամբ մոտեցումները նույնական էին: Երկուսն էլ գիտեին, որ ժողովրդական ստեղծագործությունն է «տվյալ ժողովրդի հոգու հայելին, նրա կենսագրությունը»<sup>81</sup>: Երկուսն էլ գիտեին, որ միայն «չար մարդը երգ չունի»<sup>82</sup>:

Թե՛ Հովհ. Թումանյանի և թե՛ Կոմիտասի հոգում հայոց վիշտն ու տառապանքն էր, երկուսն էլ՝ նահատակ ու ամենահայ, մեկը՝ Ամենայն Հայոց Երզնի Վեհափառ, մյուսը՝ Ամենայն Հայոց Բանաստեղծ:

Նույն՝ 1869 թվականին ծնված Հովհ. Թումանյանն ու Կոմիտաս վարդապետը, հայ գրականության և հայ երաժշտության այն ամրակուռ վեմերն են, որոնց ստեղծագործության վրա է հիմնվել նոր ժամանակների հայ մշակույթը, ինչի խոր ընկալումը օտար ազդեցությունների թատերաբեմ դարձած նորագույն շրջանում, մեր հոգևոր-մշակութային կյանքի անաղարտության պահպանման գրավականն է և հարազատ հիմքերի վրա նրա զարգացման պարտադիր նախապայմանը:

<sup>77</sup> Նույն տեղում, էջ 181:

<sup>78</sup> Նույն տեղում, էջ 196:

<sup>79</sup> Նույն տեղում, էջ 236:

<sup>80</sup> ԹԺՂ, 222

<sup>81</sup> Խ.Գ. Բաղիկյան, Կոմիտասը ինչպիսին եղել է, Ե., 2002, էջ 127:

<sup>82</sup> Նույն տեղում, էջ 128:

## Summary

---

### MEETINGS OF THE GREATS Hovhanness Toumanyanyan and Komitas

*Susanna G. Hovhannisyan*

Toumanyanyan and Komitas met for the first time in Etchmiadzin in the summer of 1904. They became good and dear friends. It is common knowledge that Toumanyanyan was the only person Komitas met in April, 1905, in Tiflis before his concerts.

Komitas loved Toumanyanyan and recognized Toumanyanyan as an artist after he became acquainted with his collection of poetry entitled *Poems* that had been published in Moscow in 1890. No doubt the composer, who was opening a new era in Armenian national music, was enthusiastic to read the works of the poet who had the same role in national literary history. Komitas was proud of Toumanyanyan, who was a national treasure and who, he was sure, would elevate the Armenian nation.

Komitas would visit Toumanyanyan every time he went to Tiflis.

As Komitas' fame intensified, the more envious and malicious were the attacks by some colleagues within Etchmiadzin toward him. After the death of Khrimian Hayrik, Komitas was subjected to further oppression when Archbishop Gevorg Surenlyants reduced his salary 10 times.

Toumanyanyan's love for Komitas' music was as deep as Komitas' admiration of Toumanyanyan's works. Toumanyanyan especially loved Komitas' "Mikac Mirza" and "Ter Ketso."

Both men were interested in the aesthetic upbringing of children. It is no coincidence that both of them cooperated with the magazine *Hasker*.

Komitas, at 40 years of age, was an internationally renowned musician when he received his first piano, a gift by a wealthy benefactor, Alexander Mantashyan. That piano was a consolation and salvation to the musician, so desperate and disappointed by his life and by the people around him. The piano provided him the opportunity to continue working and developing national songs, especially the Holy Liturgy.

Komitas is also famous for his attempt at writing the opera "Anoush." Today, the beginning of Komitas' version of "Bardz Sarer" is preserved including an extract from the "Kokhi" scene written in Armenian notes; "Ampy Takits;" "Ai Pagh Jrer;" "Aghji Anastvats;" "Asum En Urin;" "Ai Toukh Mazavor Aghjik;" "Aghji Bakhtavor;" "Siroun Aghjik, Inch Es Lalis?" "Ver Kats, Ver Igit!" "Berum En, Hren" and other parts. While Toumanyanyan took on the responsibility of writing the lines, Komitas took on the lion's share and thoroughly composed his creative thoughts. Perhaps upon Toumanyanyan's request or maybe in accordance with his own desire, Komitas kept the content of the poem intact and preserved all the characters. The only reason for not finishing the opera was because both men were busy. The poet couldn't find the time to work on it while the composer was ready to postpone all his work to adjust to Toumanyanyan's very busy schedule. Later, political persecution and pressure against Toumanyanyan increased and by the end of the year, the poet had been imprisoned.

We can affirm with confidence, that had it not been for Toumanyanyan's cruel sufferings and Komitas' mental deterioration, the opera would have been completed.

These two "brothers in spirit" are the cornerstones of Armenian culture, the very root of Armenian music and literature, therefore their friendship and personal intimacy was quite natural.